

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/5
20 մարտի 2018թ.

Քննարկվեց «ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ միջնորդությունը հնարավորություն ընձեռելու 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

«ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ բերված փաստարկները.

«ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) զբաղվում է գյուղատնտեսական մթերքների մանրածախ առևտրով: Ընկերությունը մշտապես գործել է շրջանառության հարկի դաշտում, սակայն 2018թ. համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելիս չի ստուգվել դրա վավերականությունը: Հետագայում պարզվել է, որ փաստացի այն չի ներկայացվել: Մասնավորապես, ընկերության հաշվապահը վատառողջ (ենթարկվել է վթարի) լինելու պատճառով հետագայում չի ստուգել հայտարարությունը հանձնված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հնարավորություն ընձեռել 2018թ. ընթացքում ևս շրջանառության հարկի դաշտում գործունեություն իրականացնելու համար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ-ն զբաղվում է գյուղատնտեսական մթերքների մանրածախ առևտրով և մշտապես հանդիսացել է շրջանառության հարկ վճարող:

Քննարկման ընթացքում ընկերության հաշվապահը նշեց, որ 2018թ. համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը պետք է ներկայացվեր իր կողմից, սակայն 2018թ. փետրվար ամսին ավտովթարի ենթարկվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել նշված հայտարարությունը: Արդյունքում, ընկերությունը գրկվել է 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու հնարավորությունից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը

և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ-ն բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018թ. համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել ընկերության հաշվապահի հետ տեղի ունեցած պատահարով (ավտովթար), ուստի Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ընկերությանը ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

«ՎԱԳԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. ընկերությանը համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ